որս և զվայելուչ Տաճարն Հայրարձման տեղւոյն 'ի լեառն Զիթենեաց։ Թիւ անկելոցն 'ի կոտորածէ 'ի քաղաքի անդ, դնեն ոմանք 17,000, եւ ոմանք 'ի Պատմագրաց 50,000, եւ գերելոցն 35,000 · այլք 30,000։ Կալան զՀայրապետն Երուսաղէմի զՋաքարիա և զԽաչապանն, և խոշտանգեալ տանջէին զնոսա ցուցանել զտեղի կենսաբեր Խաչափայտին Քրիստոսի, ուր և բազումք մեռան 'ի պաշտօնէից · ապա հարկեալ ցուցին զտեղին ուր ծածկեալ կայր, զոր առեալ վարեցին 'ի գերութիւն։ Զօրք Պարսից սփռեցան 'ի սահմանս Երուսաղէմի, և հասեալ 'ի վանս Ս · Սաբայ՝ աւարի առին զայն, եւ կոտորեցին զկրօնաւորս վանայ, զորոց ոսկերսն եւ զկառափունս ցուցանեն ցարդ 'ի նոյն վանս զետեղեալ 'ի բաւիղս։ Յետ այնորիկ աւարի ետուն զքաղաքն և կողոպտեցին զամենայն եկեղեցիս եւ զվանօրայս, և ժողովեալ կուտեցին արծաթ և ոսկի բազում, և հալեալ ձուլեցին զնոսա տանել 'ի դուռն Պարսից։ Եհաս լուր աւետեաց յականջս Խոսրովու, թէ առաւ Երուսաղէմ և գերեցաւ Ս · Խաչն ընդ Հայրապետին Զաքարիա · ընդ որ յոյժ խնդացեալ արքայի՝ պատուէր հրամանի արձակեաց առ զօրավարն Խոռեմ, առնել սղորմութիւն 'ի վերայ գերելոց՝ դարձուցանելով զնոսա 'ի տեղիս իւրեանց, չինել զքաղաքն և զաւերեալ տեղիսն եւ զամենայն ինչ հաստատել 'ի կարգի իւր, և զՀրէշայն հալածական առնել 'ի քաղաքէ անտի։ Ընկալեալ զօրավարին զՀրաման թագաւորին իւրոյ, կարգեաց տեղապահ աթոռոյն Երուսաղէմի զոմն երիցապետ Մոգեստոս անուն, որ չարաչար կառավարեաց զայն աթոռ զամս երիս ընդ Սերգիոս եպիսկոպոսին Յոպպէի, ասէ Մարինոս լատին։

Մեկնեցաւ զօրավարն Խոռեմ 'ի սահմանացն Երուսաղէմի բազմութեամբ գերեաց և ճոխ աւարաւ, տանելով ընդ իւր զԽաչափայտն Քրիստոսի և զՀայրապետն Զաքարիա · իսկ Հրէայք սփռեալք ընդ հրէաստան, գնեցին 'ի թագաւորէն Խոսրովայ 90,000 գերիս քրիստոնեայս եւ հեղձամահ արարին զնոսա։

Իսկ Մոգեստոս երէց ձեռն արկ և նորոգեաց զՍ · Տեղիս և զեկեղեցիս զաւերեալսն 'ի Պարսից ընդ որս եւ զեկեղեցին Հայրարձման տեղւոյն, որոյ մեծապէս ձեռն-